ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26—27-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Ն. Խ. Հարությունյանը, Ս. Ս. Թովմասյանը, Հ. Մ. Ոսկանյանը, Լ. Գ. Ղարիբջանյանը, Հ. Մ. Բաղդասարյանը, Լ. Ա. Սահակյանը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա նշեց, որ ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների անշեղ իրագործման մեջ 1974 թ. իր արժանի ավանդը ներդրեց նաև առաջավոր հայրենական գիտությունը։ Հաշվետու տարում, ասաց Վ. Հ. Համբարձումյանը, ՀՍՍՀ ԳԱ հետազոտական 30 հիմնարկներ մշակում էին 127 պրոբլեմ՝ 542 թեմա։ Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը պատմեց ՀՍՍՀ ԳԱ հիմնարկների կատարած տեսական ու գործնական կարևոր աշխատանքների մասին։ Այդուհանդերձ, ասաց Վ. Հ. Համբարձումյանը, կան բազմաթիվ չլուծված պրոբլեմներ։ ՀԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումը, որը լուրջ թերություններ բացահայտեց հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, արդարացի քննադատության ենթարկեց նաև գիտական հիմնարկների գործունեությունը։ ՀՍՍՀ ԳԱ բոլոր ինստիտուտներում և լաբորատորիաներում՝ չէ, որ հետազոտությունների մակարդակը համապատասխանում է այսօրվա պահանջներին։ Թերությունները վերացնելու համար մեծ անելիքներ ունեն ՀՍՍՀ ԳԱ բոլոր օղակները՝ ինստիտուտների ղեկավարները, բաժանմունքները, նախագահությունը։

Այնուհետև նա քննադատեց հանրապետական գերատեսչություններին ու այն կազմակերպություններին, որոնք երբեմն ձգձգում են դիտական մշակումների արդյունքները պրակտիկայում ներդնելու գործը, անտարբեր են գիտատեխնիկական առաջընթացի հարցերի նկատմամբ։

Այնուհետև հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ պարգևները։ Գիտահասարակական բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Արտաշես Կարինյանը, Վարդան Գուլքանյանը, Հրաչյա Բունիաթյանը և պատմական գիտությունների դոկտոր Սերուռնի Լիսիցյանը։ Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Վաստակաշատ» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մարտին Կասյանը, թղթակից-անդամներ Վերգինե Թառայանը, Դարյա Բաբայանը, Վազգեն Ջալոյանը, Միխայիլ Սիմոնովը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վիկտոր Սոբոլևը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորներ՝ Սամուել Կապլանը, Լյուդվիգ Միրզոյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Արամ Ինճիկյանը (հետմահու), Կամսար Գրիգորյանը։

1974 թ. արժեքավոր գիտական հետազոտություններ կատարած և պրակտիկայում մշակումների արմատավորմանը մասնակցած մի մեծ խումբ գիտնականներ արժանացան «Գովեստագրի»։ Նրանց թվում էին նաև «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի IV և V հատորների մի խումբ հեղինակներ։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1974 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ գլխավոր գիտական-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բաղունցը։ Նա ասաց, որ 1974 թ. ՀՍՍՀ ԳԱ գիտական և գիտակազմակերպչական գործունեությունն ընթացել է գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության հետագա բարձրացման, բնական և հասարակական գիտությունների բնագավառում պլանավորված աշխատանքների ծավալների ժամանակին և որակով կատարման, գիտության և արտադրության կապի ընդլայնման ու ամրապնդման և ժողովրդական տնտեսության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների ներդրումն արագացնելու ուղղությամբ։ Հաշվետու տարում ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը, բաժանմունքները և գիտական հիմնարկները շարունակել են հետևողականորեն աշխատել ժամանակակից գիտության հիմնական և կարևոր պրոբլեմների լուծման ասպարեզում գիտական կոլեկտիվների ջանքերի համախմբման, աշխատանքների տեսական և մեթոդական մակարդակի բարձրացման, երիտասարդ կադրերի պատրաստման, գիտական հիմնարկների կառուցվածքների և աշխատանքների ուղղությունների կարգավորման և

նյութատեխնիկական բազայի հետագա բարելավման ընդավառում։ Զեկուցողը հանգամանորեն վերլուծեց ակադեմիայի նախագահության, բաժանմունքների, հրատարակչության և գրադարանների գործունեությունը։ Վերջում Ս. Ա. Բակունցը կանգ առավ կադրերի պատրաստման, գիտական նստաշրջանների, կոնֆերանսների, գիտաժողովների կազմակերպման հարցի վրա։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Մ. Պ. Աղայանը, Հ. Գ. Մաղաքյանը, Ա. Գ. Նազարովը, թղթակից-անդամներ Ս. Հ. Վարդանյանը և Գ. Ա. Դալոյանը։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ ընդհանուր ժողովում ընտրություններ անցկացվեցին։ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում «Ողնաշարավորների ֆիլոգենեզում ուղեղի զարգացման կրիտիկական էտապների մասին» զեկուցմամբ հանդես եկավ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ի. Քարամյանը։ Դրանով հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքը։

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 24-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1974 թ. կատարած աշխատանքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Մ. Պ. Ալայանը։ Նա ասաց, որ ղեկավարվելով ՍՄԿԿ XXIV համագումարի և ՍՄԿԿ կենտկոմի պլենումների որոշումներով, հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկների գիտաշխատողները զգալի աշխատանք ծավալեցին հասարակական գիտությունների զարգացման տեսական պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Զեկուցողը նշեց, որ այդ ընթացքում բաժանմունքի ինստիտուտները մշակել են 43 գիտական պրոբլեմ՝ 251 թեմա։ Նշված թվից 97 թեմա ավարտվելու էին հաշվետու ժամանակաշրջանում, սակայն ավարտվել են 93-ը։ Այնուհետև Մ. Պ. Աղայանը հանգամանորեն վերլուծեց բաժանմունքի բյուրոյի և գիտական հիմնարկների գործունեությունը։ Այս տարի բաժանմունքը համալրվեց հանրապետության ԳԱ երկու ակադեմիկոսներով՝ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջանուկյան և երեք թղթակից-անդամներով՝ Ռ. Վ. Զարյան, Գ. Խ. Սարգսյան, Է. Մ. Ջրբաշյան։

Զեկուցողը նշեց, որ ձեռք բերված հաջողությունների կողքին գիտահետազոտական պլանների ու թեմաների կատարման, կոորդինացիոն և հրատարակչական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման և այլ բնագավառներում կան որոշակի թերություններ, որոնք շուտափույթ վերացում են պահանջում։

Վերջում Մ. Պ. Աղայանը նշեց, որ 1975 թ.՝ հնգամյակի ավարտական տարին, պարտավորեցնում է ավելի մեծ եռանդով աշխատել հանուն սովետական գիտության հետագա զարգացման ու առաջընթացի, հանուն մեր հայրենի երկրի բարգավաճման ու հզորացման։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, ակադեմիկոսներ Գ. Բ. Ղարիբջանյանը, Ա. Ս. Ղարիբյանը, Լ. Ս. Խաչիկյանը։ Նրանք նկատեցին, որ անհրաժեշտ է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում ստեղծել արխիվ և այնտեղ հավաքել հայ ականավոր գիտնականների ձեռագրերը և նամակները, ստեղծել ռեֆերատիվ ամսագրեր՝ գիտաշխատողներին ավելի լայն ինֆորմացիա տալու նպատակով։ Հարց դրվեց բաժանմունքին կից նոր տեխնիկայով հագեցված լաբորատորիա ստեղծելու, հայագիտությունը համաշխարհային գիտական մակարդակի բարձրացնելու նպատակով հայագիտական աշխատությունները ռուսերեն և օտար լեզուներով հրատարակելու և այլ խնդիրների մասին։

Ժողովում «Գիտատեխնիկական առաջադիմության տնտեսական պրոբլեմները» զեկուցմամբ հանդես եկավ տնտեսագիտության դոկտոր Մ. Խ. Քոչանյանը։